



Բաժնեդէրն տարեկան. — Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքանեան երկիրներ 50 Մէնթ, արտասահման 60 Մէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 9

Է. ՏԱՐԻ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1951

ՏԵՐՈՋԸ ՕԹԵԻԱՆԸ

DR. F. B. MEYER

Եթէ մէկը զիս կը սիրէ, Իմ խօսքս պիտի պահէ. ու Իմ
Հայրս՝ զանիկա պիտի սիրէ եւ անոր պիտի գանք ու անոր
քով օթեւան պիտի ընենք: Յովհ. ԺԴ. 23

Աստուծոյ օթեւանը: Ի՛նչ վսեմ իրականութիւն: Ամէն հասկացողութենէ պերազանց: Ո՛չ, կարելի չէ
միտքով ըմբռնել այս ճշմարտութիւնը, սակայն ի՛նչ
երանութիւն, որ կարելի է զայն ընդունիլ սրտով և
անով հրճուիլ: Այս նիւթին չենք կրնար մօտենալ
թեթև ու անխորհուրդ կերպով: Պատկառանքով մօ-
տեցիր այս խորհրդածութեան, ով իմ հոգիս, և ոտ-
քերէդ հանէ կօշիկներդ, քանզի մօրենին բռնկած է
Աստուածային կրակով:

« Եթէ մէկը զիս կը սիրէ... » Որ և է մէկը:
Այն դուռը զոր ես կը բանամ, լայն բացուած պիտի
ըլլայ որ և է մէկին որ մտնել կ'ուզէ: Վարագոյրը
պիտի պատուի, որպէսզի բոլոր անոնք որ հոգևոր
պայմանները կատարել ուզեն, տեսնեն լոյսը, լսեն
ձայնը և ներքին զաւիթը մտնեն:

Ա. — Աստուածային Օթեւանը. — « Օթեւան պի-
տի ընենք »: Աստուած կը խնդրէ որ հաւատացեալը
Իրեն համար հիւրասենեակ մը պատրաստէ և զայն
բոլորովին Իրեն տրամադրէ: Ու երբ Անիկա անձայն
քայլերով կը մտնէ հաւատացեալին սիրող սրտին
մէջ, նա կը լսէ Անոր քաղցր ձայնը որ կ'ըսէ «Այս է
Իմ յաւիտենական հանգիստս, ես հոս պիտի բնակիմ,

քանզի ցանկացի այս բնակութեան»: Այն, զոր երկինք
չեն կարող պարունակել, մեր մէջ տեղ կը փնտռէ:

Անոր շարժառիթը սէր է: «Հայրը զանիկա պիտի
սիրէ»: Այս ճշմարտութիւնը խիստ հիանալի է, քան-
զի Անոր մեզի հանդէպ ունեցած սէրը կը նմանի
այն սիրոյն զոր իր միածին Որդւոյն հանդէպ ունէր:
Յիսուս կ'ըսէ, «Որ աշխարհ գիտնայ թէ Դուս սիրե-
ցիր զանոնք՝ ինչպէս Զիս սիրեցիր »:

« Պիտի գանք »: Ո՞վ պիտի գայ: Հայրն Աստ-
ուած և Որդին Աստուած, շարժեալ անհուն սէրէ, պի-
տի գան և բնակին հաւատացեալին սրտին մէջ: Արդ-
եօք լուսաշող երկինքը եւ հոն Իրեն սպասարկող
բիրաւոր փայլուն էակները բաւական չեն Իրեն:
Ո՛չ, ո՛չ, սիրոյ ծարաւը կարելի չէ յագեցնել ոսկիով
կամ հրեշտակային լուսաւոր սպասաւորներով: Աս-
տուծոյ Որդին կը կարօտի ընկերոջ մը, որուն հետ
կարենայ փոխանակել Իր ներքին խորհուրդներն ու
նպատակները:

Բ. — Աստուծոյ օթեւանն ըլլալու պայմանները. —
1. — Սէր և ու Յիսուս: «Եթէ մէկը զիս կը սիրէ»: Ի՛նչ-
պէս կրնանք զայն սիրել: Սէրը Աստուծմէն է: Բա՛ց
ինքզինքդ Աստուծոյ սիրոյն առջև: Թո՛ղ որ Անոր սէ-
րը քու էութեանդ թափանցէ և յետոյ պիտի ցոլացը-
նես զայն որ ընդունած ես Անկէ:

Սուրբ Հոգին է որ յառաջ կը բերէ մեր մէջ սիրոյ

պտուղը: Ուստի լեցուէ Սուրբ Հոգիով: Զգուշացիր, որ զԱյն չտրտմեցնես դառնութեամբ, բարկութեամբ կամ չարախօսութեամբ: Հետեւէ այն սիրոյ դասին զոր Անիկա քեզի կ'ուզէ աւանդել: Անիկա պիտի առաջնորդէ մեզ Յիսուսի սիրոյն, պիտի կայնեցնէ մեզ Անոր իմաստի տակ և երբ հոն կայնած սկսինք մտածել այն անգուղական սիրոյն վրայ՝ սիրոյ կրակը պիտի արծարծի և բռնկի մեր սիրտերուն մէջ: Պիտի բորբոքինք Անոր սիրով և կատարենք Անոր մեր մէջ օթեւան հաստատելուն առաջին պայմանը:

2.— Հիսուսը ունի ինչ օթեւան: Ան որ ճշմարտապէս կը սիրէ, կը հնազանդի ալ: Ինչո՞ւ զԱյն «Տէր, Տէր» կ'անուանես, բայց Անոր չես հնազանդիր: Դուն չես կրնար զԱյն քու քաղցր լեզուովդ խաբել: Անիկա պտուղ կը փնտռէ տերեւներուն տակ: Անիկա չկրնար իր օթեւանը հաստատել անհնազանդ սրտի մը մէջ: Ոչինչ կարող է ըսնել հնազանդութեան տեղը: Կարելի է ճշմարտապէս սիրել և միեւնոյն ատեն անհնազանդ գտնուիլ: Եւ ամէն անգամ որ հնազանդութեան նոր քայլ մը կ'առնենք, Անոր լոյսը աւելի խոր կը թափանցէ մեր էութեան մէջ ու Անիկա կը ընդարձակէ իր օթեւանը մեր սիրտերուն մէջ:

ԱՅՍ ԲԱՆԸ ԻՆՁՄԷ ԵՂԱԻ

(Գ. Թագ. ԺԲ. 24)

Որդիս, այսօր աւետիս մ'ունիմ քեզի համար, զայն պիտի ըսեմ մեղմ՝ ականջիդ, որ քու վրադ հասնելիք սրտումները փառքով ոսկեզօծուին և այն փուշերը՝ որոնց վրայէն պիտի քալես, թաւիշի փափկութիւնը ստանան:

Այս աւետիսը շատ կարճ է, պզտիկ նախադասութիւն մը, թող որ ան իշնայ սրտիդ խորքին մէջ և զայն գործածես իբրեւ բարձ մը՝ հանգչեցնելու յոգնած զուխդ:

«Վասնզի այս բանը ինձմէ եղաւ»:

Խորհեցա՞ր արդեօք անգամ մը թէ ինչ որ քեզ կը վերաբերի, ինձի ալ կը վերաբերի. «Քանզի ձեզի դպչողը Անոր աչքին բիբին կը դպչի» (Զաք. Բ. 8): «Իմ առջեւ պատուական եղար», (Եսայի ԽԳ. 4) այս պատճառով մասնաւոր հաճոյք կ'զգամ քեզ ուսուցանելով:

Երբ որ փորձութիւն վրադ յարձակի և թշնամիս վրադ հասնի իբրեւ յորդող գետ մը, կը բաղձամ որ սորվիս թէ «Այս բանը ինձմէ եղաւ»: Քու տկարութիւնդ պէտք ունի իմ ուժիս և քու ապահովութիւնդ կը պահանջէ որ ինձի ձգես որ քու տեղդ պայքար մղեմ:

Դժուար պարագաներու մէջ կը գտնուիս, շրջապատուած ես այն տեսակ դժմքերով, որ քեզ չեն

կրնար ըմբռնել ու քեզ կ'արհամարհեն, յիշէ թէ «Այս բանը ինձմէ եղաւ»: Ես եմ պարագաները ստեղծող Աստուածը: Կը խորհիս թէ քեզի արժանի դիրքի մը տէրը չես, քանզի Աստուած ընտրեց քու դիրքդ քեզ համար: Զը խնդրեցիր ըլլալ խոնարհ. նայէ, ես քեզ դրի այն դպրոցն իսկ որ այս դասը կ'աւանդուի: Քու ընկերներովդ և շուրջդ գտնուող անձերուն միջոցաւ իմ կամեցած գործս պէտք է կատարուի:

Դրամական դժուարութիւններ ունիս, չե՞ս կարող հաշիւներդ հաւասարակշռել, «Այս բանը ինձմէ եղաւ», քանզի ես եմ Ան, որ ունի ամէն գանձ. կը խափանեմ որ դուն ստանաս ամէն ինչ ինձմէ և ըլլաս կատարելապէս կախեալ ինձմէ: Իմ հարստութիւններս անսահման են (Փիլ. Դ. 19). իմ խոստումներս փորձէ: Թող չըսեն քեզի համար «Եւ ասով ալ քու Տէր Աստուծոյդ չի հաւատացիր» (Օրինաց Ա. 32):

Փորձութեան գիշերէ՞ մը կ'անցնիս. «Այս բանը ինձմէ եղաւ»: Ես եմ ցաւոց մարդը և կը ճանչնամ կարօտութիւնը: Ես քեզ ձգեցի առանց մարդկային յենարանի որ ինձ դառնալով ստանաս յաւիտեական մխիթարութիւնը (Բ. Թեապ. Բ. 15-16):

Սրտակից բարեկամ մը քեզ լքեց, «Վասնզի այս բանը ինձմէ եղաւ»: Ես արտօնեցի այս լքումը որ սորվիս թէ ամենահաւատարիմ բարեկամդ է Յիսուս, որ քեզ կը պահէ անկումներէն և կը պայքարի քեզ համար:

Կ'ուզեմ ըլլալ սրտակից բարեկամդ: Արդեօք մէկը զքե՞զ անուանարկեց. ձգէ ատ, իմ ձեռքերուս մէջ իմ մօտս եկուր, թեւերուս տակ, կոխէ ու բարկութենէ հեռու, «Քանզի նա դուրս պիտի հանէ քու արդարութիւնդ լոյսի պէս և քու իրաւունքդ կէսօրուան պէս» (Սաղմոս ԼԷ. 6):

Ծրագիրներդ տակն ու վրա՞յ եղան, ճշուած ու ընկճուած ես, «Այս բանը ինձմէ եղաւ»: Քանզի քու ծրագիրներդ քու ձեռքովդ կարգադրեցիր և յետոյ ինձ խնդրեցիր որ գանոնք օրհնեմ. մինչդեռ քու ծրագիրներդ անձամբ կ'ուզեմ ես կարգադրել և ըստանձնել ամէն պատասխանատուութիւն, «Վասնզի այս բանը քեզի շատ ծանր է, դուն միայն չես կրնար ընել զանիկայ», (Ելից ԺԸ. 18) դուն միայն գործիք մըն ես և ոչ գործադրող ոյժ:

Ինձ համար մեծ գո՞րծ մ'ընել փափաքեցար արդեօք և ունեցար իբր արդիւնք՝ ցաւ ու տկարութիւն, «Վասնզի այս բանը ինձմէ եղաւ»: Որքան ատեն որ գործունեայ էիր չկրցայ քու ուշադրութիւնդ գրաւել, հիմայ քեզի պիտի ուսուցանեմ իմ խորունկ դասերէս մէկ քանին: Միայն անոնք որ սորվեցան ինձ սպասել համբերութեամբ՝ կրնան ինձի ծառայել: Իմ ամէնէն մեծ գործաւորներս յաճախ անոնք են որ մէկզի կը ձգուին, կարենալ գործածել սորվելու աղօթքի գէնքը:

Արդեօք անակնկալ դժուար և պատասխանատու

պաշտօնի՝ մը կանչուեցար, յառաջացիր և վստահեցիր: Ես քեզի կը յանձնեմ դժուարութեամբ լի գործ մը, «Վասնզի քու Տէր Աստուածդ այս պատճառաւ քու ամէն գործերուդ ու ամէն ձեռք զարկած բաներուդ մէջ քեզ պիտի օրհնէ» (Բ. Օրինաց ԺԵ. 18):

Այսօր Ես ձեռքդ կը յանձնեմ սուրբ իւղի ամանը, զործածէ զայն ազատօրէն ով իմ Որդիս: Իւրաքանչիւր քեզի պատահած պարագայ, քեզի ցաւ պատճառող բոլոր խօսքերն, համբերութիւնդ հատցնող ամէն սպասում և բոլոր տկարութեանդ արտայայտութիւնները օժէ այս իւղով և յիշէ որ ամէն յետաձգում և տխրութիւն Աստուծային սուրբ դասեր են:

Յրանսերէնէ

ՍԵԴՐԱՔ ԷՎԽԱՆԵԱՆ

ՇՆՈՐՀԱՅ ԾՈՎԷՆ

Ա

Ձանք ըրէ քու անձդ ընտիր ցուցնել Աստուծոյ տուել, այնպիսի բանուոր մը ըլլալով՝ որ պիտի չամչնայ ճշմարտութեան խօսքը շիտակ բացատրելով:

Բ. ՏԻՄ. Բ. 15

Ծնած եմ (կարբերդ) Մէզիրէի մէջ: Նախնական կրթութիւնս առած եմ սոյն քաղաքին մէջ Գերմաններու դպրոցը: Մեծ պատերազմի ժամանակ Տէրոջը ողորմութեամբ ամբողջ ընտանեօք ազատեցանք մեր աղբին վրայ եկած կոտորածէն, որովհետեւ հայրս գերմանական զործին մէջ էր եւ կառավարութիւնը անոնց գործաւորներուն չդպչեցաւ: Պատերազմէն վերջ նորէն պատեհութիւն ունեցայ ուսումս վերսկսելու Ամերիկեան նորաբաց վարժարանին մէջ, որ քիչ վերջ կառավարութեան կողմէ փակուեցաւ: Հայերու թուրքիայէն գաղթելու ատեն Հալէպ եկայ, ուր քանի մը տարի առեւտուրով զբաղող մարդու մը քով աշխատեցայ: Ծնողքս որ այս ատեն տակաւին թուրքիա կը մնային, այլեւս չկրնալով հոն ապրիլ Հալէպ եկան. որմէ յետոյ Մարսէլլ հաստատուեցանք: Ատեն մը հայրս կ'ուզէր որ առեւտրական մը ըլլամ, բայց ես փափաք չունեցայ: Վերջին գործս դերձակութիւնն էր, եւ ես որոշած էի դերձակ մը ըլլալ, երբ Տէրը ուրիշ ասպարէզ մը բացաւ առջեւս, եւ իր գործաւորն ըլլալու կանչեց զիս: Ըսելէ առաջ թէ ինչպէս այս կոչումը ընդունեցի, կ'ուզեմ հետեւեալ մէջբերումն ընել: Քրիստոնեայ ընտանիքի զաւակ ըլլալով, մանկութենէս ծնողքս զիս աստուծապաշտութեան վարժեցուցած են: Պատիկութենէս շատ կը սիրէի Ս. Գրոց պատմութիւնները եւ լաւ ալ կը սորվէի: Կանուխէն որոշում ըրի ինքնիրենս (որուն վրայ հաստատ մնացած եմ) օրական անպատճառ գոնէ երեք դուլի կարդալ: Միշտ ժողովներու ներկայ էի, եւ առանձինս կ'աղօթէի ալ. ուստի ես ինքնիրմէս

գոհ էի: Երբ ժողովներու մէջ ապաշխարութեան կոչ կ'ըլլար, կ'ըսէի, «Այդ ինքի համար չէ, ես Ս. Գիրք կը կարդամ, աղօթք կ'ընեմ, ժողովի կ'երթամ, ալ ի՞նչ բան պակաս է, ապաշխարութիւնը գէշ կեանք ապրողներուն համար է: Ինքզինքս մեղաւոր չէի սեպեր վասնզի անձնական արդարութեանս կը վստահէի: Բայց կը գոհանամ Տէրոջմէ որ իմ աչքերս բացաւ տեսնելու թէ քրիստոնեայ ծնողքի զաւակ ըլլալ, Ս. Գիրք կարդալ, աղօթել, ժողովի երթալ չէին կրնար զիս փրկել. քանզի այս բոլորով մէկտեղ, մեղաւոր մըն էի եւ անձնական Փրկչի մը պէտք ունէի, ինչու որ «Ուրիշ մէկով փրկութիւն չի կայ, վասնզի Անկէ ի զատ ուրիշ անուն մը չկայ երկինքի տակ մարդոց մէջ տրուած՝ որով կարող ըլլանք փրկուիլ»: Գործ. Դ. 12: Տէրը իմ աչքերս բացաւ իր խօսքով տեսնելու թէ մեղաւոր մըն եմ ու կորսուած: Նոյն խօսքին մէջ տեսայ Յիսուսը իմ մեղքերուս համար խաչին վրայ մեռած, որպէսզի Անոր հաւատալով չկորսուիմ, հապա յաւիտենական կեանք ունենամ: Ես ալ հաւատացի եւ Անոր արիւնը զիս ամէն մեղքէ սրբեց: Կը գոհանամ Տէրոջմէ որ Իր շնորհքով կրնամ վկայել թէ Յիսուս Քրիստոսով իմ Փրկչովս Աստուծոյ մէկ զաւակն եմ:

Արդ ըսեմ թէ ինչպէս Տէրոջը գործաւոր մը ըլլալու կոչումը ընդունեցի: Աստուծաշունչը կարդալու եւ զայն սորվելու մեծ փափաք եւ ջանք ունէի, այնպէս որ զիս ճանչցողները յաճախ կը հարցնէին ինքի թէ աւետարանիչ ըլլալով միտք ունէի. կը պատասխանէի թէ ոչ, այլ միայն Ս. Գիրք կ'ուզեմ սորվիլ: Բայց թէ այս հարցումը շատ անգամ կը կրկնուէր միտքիս մէջ: Օր մը հօրս հետ խօսելու ատեն երբ կ'ուզէր գիտնալ թէ ինչ գործ ընտրած էի կեանքիս համար, հարցուց թէ Տէրոջը գործաւոր մը ըլլալ չէի՞ ուզեր: Ըսի թէ ինքզինքս անարժան կը գտնեմ այդ մեծ գործին եւ թէ անհամարձակ եմ ու խօսիլ չեմ գիտեր: Բաւական ժամանակ ետքը նոյն հարցումը ըրաւ ինքի Տէրոջը մէկ գործաւորը. անոր ալ նոյն պատասխանը տուի եւ ջանացի այլեւս այդ ուղղութեամբ չխորհիլ. բայց, հակառակ ասոր՝ խորհեցայ եւ աւելի խորհեցայ: Աղօթեցի երկար ատեն որպէսզի Տէրը Իր կամքը յայտնէ քանզի ես պատրաստ էի Իր կամքին հնազանդելու: Տէրը օրինակներ զրաւ առջեւս Իր ծառաներէն որոնք առարկած էին ըսելով թէ մանուկ են եւ խօսիլ չեն գիտեր, գործնք Տէրը Իր գործին կը կանչէ ըսելով թէ Ինք անոնց հետ պիտի ըլլայ: Տեսայ թէ իմ առարկութիւններս ալ միայն մարդկային են եւ խորհեցայ որ չըլլայ թէ Տէրոջը կամքին անհնազանդ գտնուիմ, վասնզի Աստուծոյ աշխարհի տգէտները, անարգները եւ ոչինչները ընտրեց: Այն ատեն ներքնապէս համոզուեցայ թէ այս կոչին պէտք էի պատասխանել, ուստի հնազանդեցայ: Որոշումս տալէն ետք

Ա. Գ. Օ. Ի կողմէ Լոզան Ս. Գրային դպրոց մը ղըր-կուեցայ, ուր Տէրը իր շնորհքով պատեհութիւն տուաւ իր խօսքը աւելի հասկնալու, աւելի սորվելու, մա-նաւանդ գինք, Տէր Յիսուսը աւելի ճանչնալու:

Եղան պարագաներ ուր Տէրը ցուցուց թէ տակա-ւին բաներ կային կեանքիս մէջ, որ պէտք էր վեր-ցուէին, պարագաներ՝ ուր պէտք էր խոնարհէի, որ-պէսզի իր գործը իմ մէջս լման ըլլար: Աւելի հա-կցայ թէ ինչ ըսել է Տէրոջը ծառայ ըլլալ, հասկը-ցայ գործին մեծութիւնը և պատասխանատուութիւնը և իմ ամբողջ տկարութիւնս ու անարժանութիւնս, բայց իմ աչքերս Տէրոջը կը վերցնեմ և Անոր կը յու-սամ, վասնզի ինք է որ զիս բաւական պիտի ընէ Ա-ւետարանի պաշտօնեայ ըլլալու: Տէրը ցուցուց նաեւ թէ անարժանութիւնս, անկարողութիւնս և տկարու-թիւնս պէտք է որ զիս խոնարհութեան մէջ պահեն, որպէսզի ինք կարենայ զիս գործածել: Կը ջանամ որ Բ. Տիմ. 15ը կեանքիս մէջ իրագործեմ:

ԻՍՐԱՅԷԼ Յ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

Բ

Արդ Անոր՝ որ կարող է առատութեամբ ընել ամէն բաներէն աւելի՝ զոր մենք կը խնդրենք կամ կը խոր-հինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործուի:
Եփես. Գ. 20

Ծնած եմ Ծովքի (Խարբերդ) գեղածիծաղ ափուն-քին վրայ, ուր արեւը շատ, ջուրը անուշ, օդը քաղ-ցըր, բնութիւնը զմայլելի է: Մանկութեանս 1-9 տա-րիները գիւղական համեստ երգիքի մը տակ ան-ցան ազատ, խաղաղ ու երջանիկ: Բայց եկան տա-րիներ երբ մարդկութեան պատմութիւնը սև էջեր բացաւ եւ որուն ամենասուսուկոյնը անտարակոյս հայունն է: Ծնողքս, երեք քոյրերս, կրտսեր եղբայ-րըս սպանդանոց զրկուեցան, իսկ ծանօթ քիւրտ ձեռք մը զիս երէց եղբօրս հետ (այժմ Սմերիկա) գերու-թեան տարաւ, ուր երկար տարիներ արցունք և ցաւ եղաւ մեր բաժինը:

Զինադադարէն վերջ, Հայերու փլածը նորոգելու և կորսուածը գտնելու նպատակաւ ազնիւ մարդիկ աս-պարէզ նետուեցան, ոմանք Ամեր. Րիլիֆի առաքելու-թեանն, թուրքիոյ մէջ և շրջակայքը որբաքաղաքներ կազմակերպեցին, որոնցմէ մէկն էր որ զիս հիւրասի-րեց, իմ յոգնած էութիւնս ապահովելու: Մինակ օ-տարներ չէին գործի լծուած: Խարբերդ Վեր. Վ. Ա-միրխանեան Եղբասի դժուարին պաշտօնը ստանա-նած էր հայ «Բաբելոն»է վերդարձողներու համար: Անիկա Տէրոջ օրէնքն իր ձեռքն ունէր ուղղութիւն տալու, Աւետարանը իր ձեռքին մէջ ծաղուածները Աստուծոյ ջրով լեցուն գետը առաջնորդելու, հօր, հո-վիւի եւ առաջնորդի կոչման հաւատարիմ: Խորին ե-րախտագիտութեամբ կը յիշեմ այս Աստուծոյ մար-

դուն իմ վրայ ձգած մեծ ազդեցութիւնը: Նոյն խը-նամբը եւ հոգը ունեցան այդ ժամանակուայ ուսուցչուհիներս որոնք ուսուցչուհի ըլլալէ աւե-լի մայրեր էին մեզի որբացածներուս, սորվեցնելէ ա-ւելի կրթել էր, կրթելէ աւելի նկարագիր կերտել էր իրենց բարձրագոյն նպատակը:

Պէտք է ըսեմ թէ Աւետարանը իր արմատները խորունկ չէր թափանցած մէջս. զայն ձեռքս ունէի, բայց ոչ բոլորովին սրտիս մէջ. կը սիրէի կարգաւ, սակայն ապրիլ անկարելի կը թուէր. մեծ փափաք ունէի լսելու, բայց պատմել Աւետարանը . . . ամօթ կը համարէի. Յիսուս դեռ մարդկութեան Փրկիչն էր, բայց ոչ մարդուն՝ իմս: 1922ին արտագաղթը սկսաւ. իմ պանդուխտի նաւը երկար թափառումներէ յետոյ Մարսէյ կանգ առաւ: Մարսէյ ամէն բան նոր էր ինծի. քաղաքը նոր, միջավայրը նոր, գործը նոր, փոր-ձութիւնները նոր: Տեսայ թէ մինչեւ այդ՝ ունեցած բարոյական ուժերս ինձ բաւական չէին, անկարող կ'զգայի հոսանքն ի վեր լողալու. ինծի կենդանի եւ ժամանակին յարմար ոյժ տուող Քրիստոս մը պէտք էր, —յաւիտենական Քրիստոսը ամէն դարու Քրիս-տոսն է— որ քովս կանգնելով ըսէր, «Ես եմ, մի վախ-նար»: Աստուած իր սիրոյ կրակը վառել ձեռնարկած էր քաղաքին նորակազմ Աւետ. Եկեղեցիին մէջ: Օր մը այս վառարանէն արձակուած երկու երիտա-սարդ կայծերու հանդիպեցայ, որոնց լուսաժպիտ դէմ-քը իրենց փրկութեան վստահութիւնը կը ցոլացնէր: Առաջին հպումով բռնկեցայ, որովհետեւ երկար ժա-մանակէ ի վեր կ'ըզձայի այն կեանքին որ իրենք արդէն կ'ապրէին: Մէկ շաբաթ վերջը աղօթածողովի մը մէջ հազիւ երեք բառ կրցի քով քովի բերել աղա-ղակս Աստուծոյ բարձրացնելու: Աղօթքս լսուեցաւ բառ առ բառ և աւելին՝ այդ երեկոյին աստուածային ստեղծագործ շունչը փչեց կեանքիս վրայ: Ներքին հո-գեւոր փորձառութեան մը հիմը դրուած էր: Այդ վայրկեանէն ի վեր երբեք չկասկածեցայ թէ Տէր Յիսուս զիս փրկած է: Որքան Քրիստոսը ճանչնա-լու «գերագանց գիտութեան» մէջ յառաջացայ, այն-քան իրեն ծառայելու փափաքը տարածուեցաւ սրը-տիս մէջ, բայց երբեք միտքէս չէր անցնէր թէ օր մը պիտի կարենայի բոլոր ժամանակս, բոլոր էու-թիւնս իր տրամադրութեան տակ գնել: Տէրը միշտ աւելին ըրաւ: Լեռ դժուարութիւններ զիջուեցան առջեւ. դժուարութիւններ ներքին, դժուարութիւն-ներ արտաքին, բայց կանչողը Աստուած էր ու գոր-ծը Իրը. ինքը կատարեց զարմանալի կերպով. կըն-քեց կոչումս Իր առատ շնորհքովը, բանալով առջեւ «Էմմաուս» (Լոզան)ի դռները, որ ամէն առաւելու-թիւնովս ու յարմարութիւնովը կարծես ինծի համար պատրաստուած էր: Հոն հեռի աստուածաբանական չոր ու ցամաք վիճաբանութիւններէ ամէն օր ուսու-ցիչ ու աշակերտ Աստուծոյ վարդապետ եկողին՝ Յի-